



KOMITAS
SALON FUNÉRAIRE
Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca   (514) 331-0400

Քեպէգ նահանգի քաղաքապետական ընտրութիւններուն 6 գանատահայեր առաջադրած են իրենց թեկնածութիւնը



Կարդալ էջ 3

«Դաշնակցութիւնը եւ ուսանողութիւնը» եռօրեայ միջոցառման ընթացքին ուսանողական-երիտասարդական արդիւնաւէտ խորհրդածողով



Կարդալ էջ 4

Ազգային ժողովը ընդունեց «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հաստատման» վերաբերեալ յայտարարութեան նախագիծ

64 կողմ ձայնով Ազգային ժողովը երէկ ընդունեց «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հաստատման» վերաբերեալ յայտարարութեան նախագիծ:

Կարդալ էջ 4

Յայտարարութիւն ՀՅԴ Գանատայի 53-րդ Շրջանային ժողովի

Հոկտեմբեր 3-5 շաբաթավերջին, Մոնթրէալի մէջ կայացաւ ՀՅԴ Գանատայի 53-րդ Շրջանային ժողովը, մասնակցութեամբ՝ Թորոնթոյի, Լաւալի, Գեմպրիճի, Վանգուվըրի, Ս. Գաթրինգի, Համիլթընի, Մոնթրէալի, Օթթաուայի կոմիտէներուն պատգամաւորներուն, ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական միութեան պատգամաւորներուն: Ժողովին ներկայ էին նաեւ ՀՅԴ Բիւրոյի Գանատայի ներկայացուցիչը՝ ընկեր Բաֆֆի Տօնայետեանը, ՀՅԴ Արեւելեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը՝ ընկ. Անի Չաղլասեանը, ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան ներկայացուցիչը, ուղեկից կազմակերպութիւններու՝ ՀՄԸՄ-ի, ՀՕՄ-ի եւ Համազգայինի ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:



Յայտ. ... Ծար. կարդալ էջ 3

Միշիկընի Հայ Դատի ձեռնարկը՝ ի նպաստ Հայկական Օրէնսդրական կեդրոնի



Կարդալ էջ 3

Միքայէլ Արք. Աջապահեան դատապարտուեցաւ 2 տարուան ազատազրկման. ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը խստիւ կը դատապարտէ

Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Արք. Աջապահեան երէկ դատապարտուեցաւ 2 տարուան ազատազրկման: Երեւան քաղաքի առաջին ատենի ընդհանուր իրաւասութեան քրէական դատարանի դատաւոր Արմինէ Մելիքսեթեան հրապարակեց Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Արք. Աջապահեանի գործով վճիռը: Յիշեցնենք, որ հանրային մեղադրող դատախազը պահանջած էր Միքայէլ Արք. Աջապահեանի նկատմամբ ընտրել 2 տարի վեց ամիս ազատազրկում:

Գերագոյն... Ծար. էջ 4

MAZDA GABRIEL

2025 MAZDA3 SPORT

CONTACT KEVORK ASADOURIAN, GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES. KEVORK@GABRIEL.CA

ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Քեպեգ նահանգի քաղաքապետական ընտրություններուն 6 գանատահայեր առաջադրած են իրենց թեկնածությունը

Կիրակի, 2 Նոյեմբեր 2025-ին տեղի պիտի ունենան Քեպեգ նահանգի քաղաքապետական ընտրությունները, որոնց առաջադրուած են վեց հայազգի թեկնածուներ. Մոնթրէալի քաղաքապետութեան՝ Շանթ Գարապաճազ, Վանա Նազարեան, Մարի Տերոս, Շահէ Տարազճեան եւ Գարոլին Արսլանեան, իսկ Լաւալի քաղաքապետութեան՝ Սեդա Թօփուզեան: Ստորեւ կը ներկայացնենք անոնց հակիրճ կենսագրականները:

Շանթ Գարապաճազ

Շանթ Գարապաճազ «Transition Montréal» կուսակցութեան կողմէ Մոնթրէալի հարաւ-արեւմտեան շրջանի քաղաքապետական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած է: Շանթ ծնած է Մոնթրէալի Ahuntsic շրջանին մէջ եւ ութ տարիէ ի վեր հաստատուած է հարաւ-արեւմտեան շրջան:

Աւարտած է Մոնթրէալի համալսարանի փրիլսոփայութեան բաժանմունքը, ապա տարածաշրջանային եւ քաղաքային զարգացման ոլորտին մէջ ստացած է մագիստրոսի աստիճան Գեմպրիճի համալսարանէն:

Տասներկու տարի աշխատած է որպէս եկամտային տնօրէն, իսկ ներկայիս կը զբաղի երկրորդական կարգերու ուսուցչութեամբ:

Շանթ նախապէս մասնակցած է քաղաքապետական ընտրապայքարի: Ան իր թեկնածութիւնը առաջադրած է 2017-ին, ինչպէս նաեւ Plateau-Mont-Royal շրջանի թեկնածութիւն՝ 2021-ին:

Վանա Նազարեան

Վանա Նազարեան երկրորդ անգամ ըլլալով «Ensemble Montréal» կուսակցութեան կողմէ իր թեկնածութիւնը առաջադրած է Սեն Լորան շրջանի Côte-de-Liesse ենթաշրջանի քաղաքապետական ընտրութիւններուն: Ան եղած է «Ensemble Montréal» կուսակցութեան կողմէ ընտրուած 23 ներկայացուցիչներէն մէկը նախորդ ընտրութիւններուն ընթացքին: Պաշտօնավարած է որպէս ընդդիմութեան պաշտօնական խօսնակ՝ քաղաքի ջրային ենթակառուցուածքներու եւ հաղորդակցութեանց հարցերուն գծով:

Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի շրջանաւարտ է: Ստացած է արուեստի պատմութեան մագիստրոսի աստիճան, ինչպէս նաեւ Executive Business Administration-ի (EMBA): Աւելի քան տասը տարիէ ի վեր հաստատուած է Սեն Լորան շրջանին մէջ:

Տասը տարուան քաղաքական, նահանգային թէ քաղաքային ոլորտներէն ներս, իր գործունէութիւնը կը մասնաւորուի տեղական հարցերուն իր աշխոյժ մասնակցութեամբ, ինչպէս նաեւ ընկերային եւ համայնքային նախաձեռնութիւններով՝ բնակիչներու կենսակերպը բարելաւելու եւ հեղասահ զարգացումը խթանելու նպատակով:

Սեդա Թօփուզեան

Սեդա Թօփուզեան Mouvement Lavallois կուսակցութեան կողմէ Լաւալի Renaud Coursol շրջանի քաղաքապետական խորհուրդի ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած է, որպէս Stéphane Boyer-ի խումբին անդամ: Առաջին անգամ ընտրուած է 2021-ին եւ տասնամեակներէ ի վեր համայնքային գործունէութեան ծիրէն ներս ունի աշխոյժ եւ նուիրեալ մասնակցութիւն: Մասնագիտութեամբ ձարտարապետ է:

Շատ գործուն է Լաւալի հայ համայնքի կեանքէն ներս: Վարած է պատասխանատու պաշտօններ Հայ Օգնութեան Միութեան Լաւալի «Շուշի» մասնաճիւղին մէջ, որպէս հաշուապահ եւ փոխնախագահ: Կազմակերպած է սնունդի տրամադրման նախաձեռնութիւններ տարեցներու համար, զբամահաւաճեցնելու քաղցկեղէ տառապող հիւանդներու օգնելու նպատակով եւ մասնակցած է հարկային խորհրդատուական ծառայութիւններու՝ ցած եկամուտ ունեցող քաղաքացիներու համար:

Մարի Տերոս

Մարի Տերոս «Ensemble Montréal» կուսակցութեան կողմէ, Villeray-Saint-Michel-Parc-Extension շրջանի Parc-Extension ենթաշրջանի քաղաքապետական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած է:

Որպէս Մոնթրէալի քաղաքային խորհրդական, ան եղած է «Ensemble Montréal» կուսակցութեան ընտրուած 23 ներկայացուցիչներէն մէկը նախորդ ընտրութիւններուն ընթացքին եւ պաշտօնավարած է որպէս ընդդիմութեան պաշտօնական խօսնակ՝ ներգաղթողներու ներգրաւման հարցերուն մէջ, ինչպէս նաեւ Մոնթրէալի ընկերային զարգացման եւ բազմազանութեան յանձնաժողովին որպէս փոխնախագահ (2009-2011 թուականներուն):

Ծնունդով յունահայ Մարի Տերոս Մոնթրէալ հաստատուած է 1958-ին: Ան 27 տարի շարունակ (1998-էն ի վեր) եղած է Parc-Extension շրջանի Քաղաքապետական խորհուրդի անդամ: Ան եղած է գործադիր վարչախումբի անդամ՝ Pierre Bourque եւ Gérald Tremblay վարչակազմներուն ժամանակ:

Շահէ Տարազճեան

Շահէ (Sharkie) Տարազճեան Ensemble Montréal կուսակցութեան կողմէ Pierrefonds-Roxboro շրջանի Cap-Saint-Jacques ենթաշրջանի քաղաքապետական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած է: Ան եղած է «Ensemble Montréal» կուսակցութեան ընտրուած 23 ներկայացուցիչներէն մէկը նախորդ ընտրութիւններուն ընթացքին եւ պաշտօնավարած է որպէս շրջանի խորհրդական: Ծնունդով սուրիահայ Շահէ Տարազճեան Մոնթրէալ հաստատուած է 1968-ին: 20 տարիէ ի վեր կը գործէ որպէս հանրային գործիչ: 1986-էն ի վեր բնակիչ է Pierrefonds-Roxboro շրջանին:

Գարոլին Արսլանեան

Մոնթրէալի L'Île-Bizard-Sainte-Genève շրջանին մէջ հասակ նետած եւ կրթութիւն ստացած Գարոլին Արսլանեան Projet Montréal կուսակցութեան կողմէ Sainte-Genève ենթաշրջանի քաղաքապետական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած է:

Գարոլին Արսլանեան ճանչցուած է հանրային կեանքի իր նուիրումով: Իր առնչութիւնը այն թաղամասին հետ, ուր ապրած է, կ'արտայայտուի աւելի քան տասնհինգ տարուան հանրային եւ քաղաքական կեանքի աշխոյժ մասնակցութեամբ՝ քաղաքապետական, նահանգային եւ դաշնակցային մակարդակներուն վրայ:

Վեց լեզուներու տիրապետող տիկին Արսլանեան իր կարողութիւնները ի սպաս դրած է միջնակարգային երկխօսութեան եւ քաղաքացիական կեանքի մասնակցութեան խթանման:

Միշիկընի Հայ Դատի ձեռնարկը՝ ի նպաստ Հայկական Օրէնսդրական կեդրոնին

Ֆարմինկթըն Հիլզ, Միշիկըն.– Վերջերս, Միշիկընի Հայ Դատի յանձնախումբը կազմակերպեց ձեռնարկ մը, նիւթ ունենալով միջազգային դատարաններուն մէջ, հայ գերիներու իրաւունքները հետապնդող եւ պաշտպանող Հայկական Օրէնսդրական կեդրոնը, որ աշխարհի մէջ գործող միակ օրէնսդրական հաստատութիւններէն մէկն է:

Ձեռնարկին բացումը կատարեց տեղւոյն Հայ Դատի նախագահ Ծովինար Համակործեան, որ շեշտեց այս կարեւոր աշխատանքին եւ օրէնսդրական պաշտպանութեան կարեւորութիւնը հայ ժողովուրդին համար: Ան ներկայացուց Հայկական Օրէնսդրական կեդրոնի նախագահ Քէն Սաչիկեանն ու կեդրոնի գործադիր տնօրէն եւ Միջազգային համեմատական իրաւունքի կեդրոնի (International Comparative Law Center.– ICLaw) նախագահ Սիրանուշ Սահակեանը:

Իր խօսքին մէջ, Սաչիկեան ընդգծեց շարունակական օրէնսդրական գործողութիւններու հրատարակ անհրաժեշտութիւնը՝ նշելով, որ Հայկական Օրէնսդրական կեդրոնը աշխարհի մէջ գործող այն սակաւաթիւ օրէնսդրական մարմիններէն մէկն է, որ միջազգային դատարաններու ճամբով պայքար կը մղէ Հայկական գերիներու ազատ արձակման համար:

Սահակեան, որ մարդու իրաւունքներու բնագաւառէն ներս մասնագիտացած է եւ հայ գերիներու ազատ արձակման հարցերով ունեցած է երկարամեայ փորձառութիւն, ներկայացուց իր հիմնական գաղափարները: Ան մանրամասն տեղեկութիւններ տուաւ Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներու ներկայ վիճակին մասին՝ բացատրելով օրէնսդրական խոչընդոտները, որոնք կը բարդացնեն անոնց վերադարձը: Սահակեան նշեց, որ մարդասիրական հսկողութիւնը խիստ սահմանափակուած է՝ Կարմիր Սաչի Միջազգային Կոմիտէին արտաքսուելէն եւ Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ միջազգային դիտարկման կամ օրէնսդրական ներկայացուցչութեան դէմ դրուած արգելքէն ի վեր:

Ան նաեւ շեշտեց, թէ Ատրպէյճան կը շարունակէ միջազգային օրէնսդրութեան խախտումներ կատարել, ներառեալ հիւպատոսական մուտքի մերժումը եւ դատավարութիւններու հետեւողական հսկողութեան արգելքը: Ան նշեց Եւրոմիութեան Խորհուրդի մէկ ենթայանձնախումբին վերջին հրապարակային քննադատութիւնը՝ ուղղուած Ատրպէյճանի բանտերու պարզած իրավիճակին:

Սահակեան ընդգծեց, որ Եւրոպայի Մարդու Իրաւունքներու Դատարանը հետեւողական դրութեամբ զեկուցումներ կը պահանջէ Պաքուէն, հայ գերիներու առնչութեամբ, յաւելեալ մանրամասնութիւններ փոխանցելով մարդասիրական օրէնսդրութեան խախտումներուն, փոխհատուցման պահանջներուն, հայկական ինքնութեան պաշտպանութեան եւ տեղահանուածներու ապահով վերադարձի երաշխիքներու մասին:

Ան անդրադարձաւ նաեւ վերջին քաղաքական համաձայնագիրներու ձախողութիւններուն, մասնաւորապէս գերիներու հարցին եւ վերադարձի իրաւունքին բացակայութեան՝ Թրամփի միջնորդութեամբ կնքուած «խաղաղութեան համաձայնութեան» մէջ, որ դժբախտաբար կոչ կ'ընէր հրաժարել օրէնսդրական պահանջներէն:

Սահակեան տեղեկացուց, թէ կը հետապնդուին ազերի այն պետական պաշտօնեաները, որոնք պատասխանատու են բռնութիւններու եւ չարաչառումներու համար:

Միշիկընի Հայ Դատի յանձնախումբը իր գնահատանքը փոխանցեց Սահակեանին եւ Սաչիկեանին իրենց կատարած աշխատանքին : Երեկոյն ծառայեց իբրեւ զօրակցական հարթակ՝ միաժամանակ վերահաստատելով Միշիկընի Հայ համայնքին նուիրումը՝ արդարութեան, պատասխանատուութեան եւ հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան գործին:

Յայտ. ... Սկիզբը կարդալ էջ 1

Երեք օրերու վրայ երկարող նիստերու ընթացքին, քննարկուեցան Հայ Դատի, կազմակերպական, քարոզչական եւ համագաղութային հարցեր եւ անոնց լուծման ի խնդիր տրուեցան համապատասխան որոշումներ:


Ժողովը արժեւորեց եւ բարձր գնահատեց Գանատայի Հայ Դատի յանձնախումբի նպատակաուղղուած քաղաքական գործունէութիւնը եւ միաժամանակ որոշեց Գանատայի տարածքին գործող Հայ Դատի յանձնախումբերու քարոզչական եւ յարաբերական կարողականութիւններուն ներուժը ի սպաս դնել Հայաստանի պետութեան եւ Արցախին:

Շրջանային ժողովը դատապարտեց Հայաստանի իշխանութիւններուն անձնատուողական քաղաքական վարքագիծը եւ զօրակցութիւն յայտնեց ՀՅԴ Հայաստանի կուսակցական կառոյցին՝ որպէս ՀՀ իշխանութիւններուն հակադրուած կառուցողական ընդդիմադիր ուժ, եւ հաստատեց բռնագաղթի ենթկրկուած արցախահայութեան անժամանցելի իրաւունքներու վերականգնման յանձնառութիւնը: Ժողովը նաեւ իր զօրակցութիւնը յայտնեց Հայաստանի քաղաքական բանտարկեալներուն եւ Պաքուի մէջ արգելափակուած հայ ռազմագերիներուն:

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական եւ Պատանեկան միութիւններու շարքերու ՀՅԴ գաղափարախօսական դարբնոցին մէջ թրծելու առաջադրանքը շարունակելու առնչութեամբ՝ ժողովը վերահաստատեց իր պարտաւորութիւնները:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Կեդրոնական կոմիտէ:

ՀՅԴ Գանատայի 53-րդ Ծրցանային ժողով



«Դաշնակցութիւնը եւ ուսանողութիւնը» եռօրեայ միջըրջանային ուսանողական-երիտասարդական արդիւնաւէտ խորհրդաժողով

Կազմակերպութեամբ ՀՅԴ Զաւարեան Ուսանողական միութեան, Լիբանանի մէջ տեղի ունեցաւ «Դաշնակցութիւնը եւ ուսանողութիւնը» եռօրեայ միջըրջանային ուսանողական-երիտասարդական խորհրդաժողով:

Խորհրդաժողովին մասնակցեցան ՀՅ Դաշնակցութեան ուսանողական եւ երիտասարդական հետեւեալ 12 միութիւնները. Զաւարեան Ուսանողական միութիւն (Լիբանան), Լիբանանի Երիտասարդական միութիւն, «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական միութիւն (Հայաստան), Հայաստանի Երիտասարդական միութիւն, Արցախի Երիտասարդական միութիւն, «Յովնան Դաւթեան» Ուսանողական միութիւն (Իրան), «Ռուբէն» Երիտասարդական միութիւն (Նոր Զուղա, Իրան), «Ռոստոմ» Երիտասարդական միութիւն (Թեհրան, Իրան), Քուէյթի Երիտասարդական միութիւն (Թեհրան, Իրան), Քուէյթի Երիտասարդական միութիւն (Ֆրանսա), «Գարեգին Նժդեհ» Երիտասարդական միութիւն (Հոլանտա), «Խանասոր» Երիտասարդական միութիւն (Անգլիա):

Նախաձեռնութեան նպատակն էր առիթ մը ստեղծել, ուր ուսանողութիւնը եւ երիտասարդութիւնը կրնան փոխանակել իրենց կազմակերպական փորձառութիւնը, տեսակէտները եւ գաղափարները՝ կազմակերպական աշխատանքներու բարելաւման եւ ընդլայնման համար, զարկ տալով հմտութիւններու եւ համագործակցութեան հնարաւորութիւններուն:

Եռօրեայ խորհրդաժողովը ունէր օրակարգային 4 բաժանումներ՝ գեկոյցներ, դասախօսական նիւթեր, քննարկում/բանավէճեր եւ այցելութիւններ:

Խորհրդաժողովին մեկնարկը կատարուեցաւ Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2025-ին «Աղբալեան ՀՄԸՄ» մարզամշակութային համալիրին մէջ: Մասնակից երկիրներէ ժամանած ՀՅԴ ուսանողական եւ երիտասարդական միութիւններու ներկայացուցիչները զեկոյցեցին 2020-էն ետք իրենց միութիւններու տարած գործունէութեան մասին: Ապա Հայկազեան համալսարանի դասախօս Ծաղիկ Խիւտապետեան մասնագիտացած ներկայացուցիչը կատարեց «Դաշնակցական երիտասարդին հոգեբանական վիճակը՝ յետարցախեան պատերազմին» նիւթով, որուն յաջորդեց զրոյց մը:

Այս ներկայացումէն ետք Հայկազեան համալսարանի դասախօս Ծանթ Ստեփանը վարեց գիտաշխատանոց մը՝ «Ընկերային ցանցերը որպէս առաջնային միջոց ազդու քարոզչութեան եւ տրամադրու-

թիւններու ստեղծման համար» նիւթով:

Օրուան աւարտին խորհրդաժողովի մասնակիցները այցելեցին Պիքֆայայի դպրեմանքը, ուր հանդիպում մը ունեցան Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ: Հանդիպումը առիթ հանդիսացաւ Վեհափառին օրհնութիւնը ստանալու, ինչպէս նաեւ՝ ազգային գործունէութեան մէջ ուսանողութեան դերին մասին զրուցելու:

Խորհրդաժողովի առաջին օրուան յայտագիրը փակուեցաւ Պիքֆայայի մէջ Հայոց Յեղասպանութեան յուշարձանի դիմաց «Կիլիկիա» երգով:

Շաբաթ, 4 Հոկտեմբերին խորհրդաժողովի մասնակիցները այցելեցին «Շաղոյեան» կեդրոն, ուր ծանօթացան ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի, «Վանայ Զայն» ձայնասփիւռի կայանի, «Ազգակ» օրաթերթի խմբագրատան եւ Համագործակցութեան կազմակերպչական գործունէութեան:

Օրուան յայտագիրը ընդգրկեց զանազան դասախօսութիւններ եւ զրոյցներ: Կրթական մշակ Կարօ Յովհաննէսեան հանդէս եկաւ «Դաշնակցութեան հակադիր պայքար» նիւթին մասին պատմական ակնարկով մը, որ մեծ հետաքրքրութիւն գտաւ մասնակիցներուն կողմէ: Ապա ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ Տիգրան Ժինպաշեան ներկայացուց «ՀՅԴ-ի ներկայ ռազմավարութիւնը եւ ծրագրի նպատակները, ՀՅԴ 35-րդ Ընդհանուր ժողովի հիման վրայ» նիւթը:

Դասախօսութիւններուն յաջորդեցին զրոյց եւ բանավէճ: Զրոյցի թեման էր՝ «Կովկասի մէջ քաղաքական իրավիճակ յետարցախեան պատերազմ - Պիտանի խորհուրդներ եւ հնարքներ քաղաքական դաշտի ուսումնասիրման եւ գործընթացներու հետեւելու ժամանակ», որ վարեց քաղաքագէտ, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Եղիա Թաշճեանը: Իսկ «ՀՅԴ-ն 21-րդ դարուն, գաղափարական կեդրոնացման եւ գործելաոճային այլադասութեան մարտահրաւէրները եւ ընծայած առիթներ» բանավէճը վարեց ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Տէր Դուլիսեանը:

Երեկոյեան մասնակիցները այցելեցին «Թուչնոց բոյն», Հայոց Յեղասպանութեան որբերու «Արամ Պէգիբեան» թանգարանը, որմէ ետք շրջագայեցան Պիպլոս եւ Պաթրոն քաղաքներուն մէջ:

Կիրակի, 5 Հոկտեմբերին օրը սկսաւ զրոյց-քննարկումով մը՝ «Միջին Արեւելքի քաղաքական քարտէսի նոր ուղղութիւնները» նիւթով, որուն կը

մասնակցէին՝ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Եղիա Թաշճեան, «Ազգակ» օրաթերթի տնօրէն եւ գլխաւոր խմբագիր Շահան Գանտաճարեան եւ ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի մարմինի ատենապետ Վահրամ Էմմիեան:

Անոր յաջորդեց գիտաշխատանոց մը՝ «Ինչպէ՞ս ապահովել Հայ Դատի համար գորակցութիւն եւ զօրաշարժ՝ տարբեր համայնարաններու մէջ» նիւթով: Գիտաշխատանոցը վարեց ՀՅԴ Լիբանանի Երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան անդամ Աշոտ Բազրատունին: Ապա ՀՅԴ Միջին Արեւելքի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Վերա Եսաբեկեան ներկայացուց «Ինչպէ՞ս կատարել հետեւողական յարաբերական գործունէութիւն եւ ծառայեցնել մշակուած կապերը երկարամիջոց բարեկամութիւններ ձեւաւորելու համար» նիւթը:

Օրուան երկրորդ կիսուն ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակի պատասխանատու Յուրի Աշրգեան վարեց զրոյց/գիտաշխատանոց մը՝ «Դաշնակցական ուսանողութեան դերը կուսակցութեան արդիականացման, համահայկական օրակարգերու ձեւաւորման եւ Հայ ուսանողութիւնը այս առանցքին շուրջ համախմբելու գործին մէջ» նիւթով:

Աւարտին խորհրդաժողովի մասնակիցները այցելեցին Պուրճ Համուտի եւ Ֆըրն Շրպպէքի ազգային գերեզմանատուններ, ուր ծաղկեպսակներ դետեղեցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պանթէոնին, Լիզպոնի գործողութեան նահատակ ընկերներուն եւ այլ կուսակցական գործիչներու շիրիմներուն: Մասնակիցները նաեւ առիթ ունեցան շրջելու Կեդրոնական Պէյրութի մէջ:

ՀՅԴ Զաւարեան Ուսանողական միութեան կազմակերպած «Դաշնակցութիւնը եւ ուսանողութիւնը» միջուսանողական-երիտասարդական խորհրդաժողովը եզրափակուեցաւ միութիւններու ներկայացուցիչներու միջեւ յուշանուէրներու փոխանակումով եւ միասնական ընկերական ընթրիքով մը՝ «Աբրահամ Աշճեան» երիտասարդական կեդրոնէն ներս:

Խորհրդաժողովը ՀՅԴ Զաւարեան Ուսանողական միութեան 120-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս կարեւոր համախմբում մըն էր, որ կրկին անգամ փաստեց դաշնակցական երիտասարդութեան միասնութիւնը եւ հայութեան դիմադրաւած առաջնային օրակարգերու հետ կապուած պատրաստակամութիւնն ու նուիրումը:

Ազգային Ժողովը ընդունեց «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հաստատման» վերաբերեալ յայտարարութեան Գնահատում

64 կողմ ձայնով Ազգային ժողովը երէկ ընդունեց «Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հաստատման» վերաբերեալ յայտարարութեան նախագիծ:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան հեղինակած նախագիծը ներկայացնելու ընթացքին խմբակցութեան ղեկավար Հայկ Կոնչորեան, յղում կատարելով ուսաշինկթընեան համաձայնութիւններուն, իբրեւ հիմնաւորում ներկայացուց այն, որ Ազգային ժողովը՝ ստեղծուած իրողութիւններուն մէջ իբրեւ առաջնային լիազօրութիւնը կրող մարմին, իր աջակցութիւնը կը յայտնէ այդ գործընթացներուն:

«Եւ ամփոփելով՝ կոչ կ'ուղղէ Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան հանրային, քաղաքական, փորձագիտական, գիտական, մշակութային շրջանակներուն ձեռնպահ մնալու համարատուութիւնը խորհրդանշող եւ/կամ զայն վերաձեւակերպելուն կամ բորբոքելուն ուղղուած խօսքովներէն եւ գործողութիւններէն՝ հաստատուած խաղաղութեան յարատեւութիւնն ու յուսալիութիւնը յանուն Հարաւային Կովկասի բարգաւաճման երաշխաւորելու համար», կարգաց ան:

Յայտարարութեան նախագիծը ընդունուեցաւ արտահերթ նիստի ընթացքին: Նիստը գումարուեցաւ քառօրեայի աւարտէն անմիջապէս ետք:

Ընդգրկմազիր երկու խմբակցութիւնները՝ «Հայաստան»-ը եւ «Պատիւ ունեմ»-ը նիստին չմասնակցեցան: Անոնք կեղծ օրակարգ կը նկատեն յայտարարութեան խաղաղութիւնը:

Գերագոյն... Սկիզբը կարող էր 1

Այս առիթով ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ խստիւ դատապարտեց Միքայէլ Սրբազանի դէմ արձակուած դատավճիռը: Յայտարարութեան մէջ կը նշուի.

«ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը խստօրէն դատապարտում է Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանին երկու տարուան ազատազրկման դատապարտելու անօրինական եւ խայտառակ որոշումը:

«Սա ոչ միայն հոգեւորականի դէմ իրականացուած հաշուեյարդար է, այլեւ Հայ առաքելական սուրբ եկեղեցու, մեր ազգային ինքնութեան եւ քաղաքացիների ազատ արտայայտման իրաւունքի դէմ ուղղուած քաղաքական յարձակում: Այս վճիռը եւս մէկ ասպոյց է, որ գործող իշխանութիւնը Հայաստանում կառուցում է բռնապետական վարչակարգ, որտեղ դատարանները վերածուած են իշխանութեան ձեռքին բոլոր գործիքի:

«Վստահ ենք՝ հեռու չէ այս ամէնի համար պատասխան տալու ժամանակը»:

Տարածեցէք ձեր «Բորիլոն»ը



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Յացել՝ **PERMIS DE QUÉBEC**

Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թիւ 10, Հոկտեմբեր 2025



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

ՀՈՏ ԲԱԶՄՈՒԹԱՄԲ ԴԻՄԱԴՈՐԵՆՔ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետ, իր Գահակալութեան 30-ամեակի առիթով օրհնաբեր այցելութիւն պիտի շնորհէ Գանատայի Հայոց Թեմին:

Մենք բոլորս՝ հոգեւորական, թէ աշխարհական, միասնաբար պիտի դիմաւորենք արի եւ քաջ հովուապետը՝ ով հայ եկեղեցւոյ ղեկը իր ձեռքին կու գայ հանդիպելու իր հօտին՝ հեռաւոր այս երկրին մէջ ապրող զաւակներուն:

Վեհափառ Հայրապետի այցելութիւնը առիթ մը պիտի ընծայէ մեր ժողովուրդի զաւակներուն՝ մօտէն լսելու հովուապետին ձայնը եւ վայելելու անոր քաջ եւ արթուն հսկողութիւնը, առաջնորդութիւնը եւ գուրգուրոտ խնամատարութիւնը:

Սիրելի հայորդիներ, վստահ եմ, որ երախտագիտութեան խոր զգացումներով պիտի դիմաւորէք եւ որդիաբար պիտի շրջապատէք հայոց հայրապետը, որ երեսուն երկար տարիներու ընթացքին իրականացուցած է ձեր յոյսերն ու երազները եւ Իրմով հայ եկեղեցին եւ հայ կեանքը անելի ճոխացած եւ հարստացած է: Իրմով այսօր, առաւել եւս մեծ պայծառութեամբ հայ եկեղեցին կը ճառագայթէ՝ օտար երկիրներու եւ եկեղեցիներու շարքին: Այս բոլորին դիմաց մեր սրտերը արդար հպարտութեամբ կը լեցուին, կ'առատանայ մեր սէրը եւ կը խորանայ մեր երախտագիտութիւնը եւ առաւել կ'աւելնայ մեր որդիական յարգանքը հանդէպ Նորին Սուրբ Օծութեան:

Հարազատ Որդիի ամենաջերմ աղօթքներով կը խնդրեմ Աստուծմէ, որ երկար եւ քաջառողջ կեանք պարգեւէ Նորին Վեհափառութեան եւ առաւել շքեղ փառքով ծաղկեցնէ իր հայրապետական գաւազանը: Թող Աստուած անսասան պահէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր ողջ միաբանութեամբ, դպրեվանքով ու աշխարհացրի ժողովուրդով: Քաջ գիտեմ ու վստահ եմ, որ Վեհափառ հայրապետին այցելութիւնը առաւել պիտի յուսադրէ եւ զօրացնէ մեզ գալիքին՝ ապագային նկատմամբ, մանաւանդ խորացնելով մեր հաւատքը հայ ժողովուրդի յարատեւ գոյատեւման, ծաղկումին եւ յաւերժութեան նկատմամբ:

Այս գիտակցութեամբ եւ հոծ բազմութեամբ դիմաւորենք հայոց հայրապետը, լսենք իր հայրական պատգամները, աղօթակից դառնանք իր հետ, շնորհաւորենք անոր գահակալութեան 30-ամեակը ու մանաւանդ խոնարհելով համբուրենք իր միռանաբայի աջը եւ ստանանք իր օրհնութիւնները:

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հոկտեմբերի երկրորդ շաբաթավերջին, Գանատայի մէջ կը տօնենք Գոհաբանական տօնը (Thanksgiving): Այս տօնը երախտագիտութեան առիթ մըն է, հարազատներով համախմբուելու եւ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ այն բոլոր օրհնութիւններուն համար, զորս ամբողջ տարուան ընթացքին կը վայելենք՝ ընտանիք, առողջութիւն, ընկերներ եւ հանապազօրեայ հաց:

Պօղոս Առաքեալ մեզի կը պատուիրէ. «Միշտ ուրախ եղէք, անդադար աղօթեցէք: Ամէն բանի համար շնորհակալ եղէք, որովհետեւ Աստուած ատիկան կը սպասէ ձեզմէ, որ Քրիստոս Յիսուսի միացած էք» (Ա. Թս 5:16-18):

Գոհունակ սիրտ ունենալով մենք կեանքի բոլոր պարագաներուն մէջ կը սկսինք տեսնել Աստուծոյ ձեռքը: Իրաքանջիւր արեւածագի մենք կը տեսնենք Աստուծոյ փառքը, որ մարդկային մտքին հասանելի չէ: Նորածին երեխայի ճիչը, ապա, ծնողներու ժպիտը՝ հրաշքներ են, որոնք մարդուս պարգետած են Աստուծոյ կողմէ: Կեանքի բոլոր դժուարութեանց ու փորձութեանց ժամանակ տոկալը՝ Աստուծմէ մեզի տրուած շնորհք մըն է: Կարելի է շարքը երկարել: Միշտ պէտք է անդադարառնանք, որ այս կեանքը, զոր կ'ապրինք պէտք է արժեւորենք եւ գոհունակ սրտով մօտենանք ամէն բանի:

Մարդկային մեր բնութիւնը տկար է, շատ անգամ մեզ դժգոհութեան կը մղէ: Միշտ կայ բան մը, որ կը պակսի, միշտ կայ ցանկութիւն մը, որ անբաարարութեան կ'առաջնորդէ: Բայց հաւատացեալը կը հրաւիրուի իր աչքերը բանալու եւ տեսնելու, որ Աստուծոյ սիրոյ ծովուն մէջ ապրող մարդը երբեք աղքատ չէ մնացած: Իսկական հարուստ մարդը այն անձն է, որ գիտէ իր ունեցածով գոհանալ եւ այդ ունեցածը բաժնել ուրիշներուն:

Այս Գոհաբանութեան Տօնին, երբ մեր սեղանները կը լեցուին եւ մեր ընտանիքները կը համախմբուին, փորձենք նաեւ յիշել բոլոր անոնք, որոնք առանձին են, կարօտեալ են, սիրոյ պակասը ունին իրենց կեանքին մէջ եւ միշտ փառք տանք Աստուծոյ մեր ունեցածին համար:

Միշտ ուրախ ըլլանք, անդադար աղօթենք: Ամէն բանի համար շնորհակալ ըլլանք, որովհետեւ Աստուած ատիկան կը սպասէ մեզմէ, որ Քրիստոս Յիսուսի միացած ենք (հմմտ Ա. Թս 5:16-18):

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Այս աշխարհի մարդոց վարուելակերպը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Հռոմայեցիս 12:2):

“Do not conform to the pattern of this world but be transformed by the renewing of your mind. Then you will be able to test and approve what God’s will is—his good, pleasing and perfect will.” (Romans 12:2)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ...

ԽԱՉԻՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿՐԱԿԸ

«Այս քարոզը կը սորվեցնէ, որ մարդ առանց Քրիստոսի կառչելու չի կրնար յաղթահարել չարին գայթակղութիւնները եւ թէ ինչ պէտք է ընեն բոլոր անոնք, որոնք կարօտով եւ մեծ ցանկութեամբ Աստուծոյ փառքը կը խնդրեն: Կը սորվեցնէ նաեւ, որ Ադամի անհնազանդութեան պատճառով, մենք բոլորս մարմնաւոր ցանկութիւններու ստրուկները դարձանք, եւ սակայն խաչին ծածուկ խորհուրդով՝ փրկուեցանք: Քարոզին մէջ կը բացատրուի նաեւ, թէ արցունքին եւ աստուածային կրակին զօրութիւնը շատ մեծ է»:

ՀԻՆ ՄԱՐԴՈՒՆ ՎԻՃԱԿԸ

4.- Եթէ կ'ուզես գիտնալ, թէ մենք՝ որ պատիւով ստեղծուեցանք եւ դրախտին մէջ դրուեցանք ապրելու համար, ժամանակ մը ետք (տես Սղ 49.12, 20) ինչո՞ւ սկզբնական փառքէն վար ինկանք, պատճառը պատուիրազանցութիւնն էր: Այն պատուիրանազանցութեան պատճառով մենք բոլորս ալ մարմնաւոր հեշտանքներուն գերին դարձանք: Մենք մեզ դուրս հանեցինք (տես Սղ 116.9) եւ գերի դարձանք (տես Սղ 137.1): Եւ քանի որ մինչեւ հիմա բանտարկուած կը մնանք «Եգիպտոսի» մէջ, այդ պատճառով ալ ցարդ չենք ժառանգած խոստացուած երկիրը, որ «Կաթ ու մեղր կը բխի» (տես Ելք 3.8): Տակաւին, չենք խմորուած «անկեղծութեան թթխմորով» (Ա. Կր 5.8), այլ չարութեան եւ անզգամութեան խմորին մէջն ենք: Դեռ մեր սրտերուն վրայ չէ սրսկուած Աստուծոյ (Գառնուկին) արիւնը, որովհետեւ «Դժոխքի թակարդ»ն (տես Առ 9.18) ու մեղքի կարթը լարուած կը մնան մեր մէջ: Յարդ չենք ընդունած Քրիստոսի փրկութեան հրճուանքը, որովհետեւ «մահուան խայթոցին» (Ա. Կր 15.55) արմատները տակաւին մեր մէջ են: Դեռ չենք հազած «նոր մարդը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, քանի որ մեզմէ դուրս չենք հանած մեր հին ինքնութիւնը, խաբուակ ցանկութիւններով ապականած» (Եփ 4.22): Տակաւին, մեր մէջ չենք կրեր «Երկնաւոր Ադամին պատկերը» (Ա. Կր 15.49), Իր փառաւոր պատկերին նման չենք (տես Փլպ 3.21) եւ զԱստուած հոգիով եւ ճշմարտութեամբ չենք պաշտեր (հմտտ 3< 4.24), որովհետեւ մեղքը կը թագաւորէ մեր մահկանացու մարմիններուն մէջ (Հռ 6.12):

Մենք տակաւին չենք տեսած «Անմահ Աստուծոյ փառքը» (Հռ 1.23), որովհետեւ թանձր գիշերուան մութ ազդեցութեան տակ ենք: Յարդ լոյսի զէնքերը մեր վրայ չենք առած (Հռ 13.12), որովհետեւ մեզմէ չենք հեռացուցած խաւարի զէնքերը, աղեղներն ու գործերը: Մենք «նորոգուած մտքերով նոր մարդ չենք եղած», որովհետեւ տակաւին «այս աշխարհի մարդոց վարմունքը կ'ընդօրինակենք» (Հռ 12.2), հեթանոսներու նման անմտօրէն կ'ապրինք (Եփ 4.17). եւ տակաւին Քրիստոսը չենք փառաւորուած, որովհետեւ իր չարչարանքներուն մասնակից չենք եղած (Հռ 8.17), եւ ոչ ալ իր վերքերուն սպիները կը կրնենք մեր մարմիններուն վրայ (Գղ 6.17): Քրիստոսի խաչին խորհուրդով չենք ապրիր, որովհետեւ տակաւին «մարդկային կիրքերն ու ցանկութիւնները շեշտուած են մեր մէջ» (Գղ 5.24). տակաւին չենք եղած «ժառանգորդները Աստուծոյ եւ ժառանգակից՝ Քրիստոսի» (Հռ 8), որովհետեւ տակաւին «ծառայութեան հոգին» մեր մէջն է եւ ոչ թէ «որդեգրութեան հոգին» (Հռ 8.15), եւ ցարդ «Աստուծոյ տաճար» եւ «Սուրբ Հոգիին բնակարան» (Ա. Կր 3.16) չենք եղած, քանի որ տակաւին կուռքերու տաճար ենք եւ պիղծ ոգիներու բնակարան, մեր ցանկութիւններուն կառչածութեան պատճառով:

**ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՂՆԵՐ»**
Հայացուց՝ Մակար Արք. Ազգարեան
(Շարունակելի 2)

A PRAYER OF TRUST AND RESCUE

In you, LORD, I have taken refuge;
let me never be put to shame;
deliver me in your righteousness.
Turn your ear to me,
come quickly to my rescue;
be my rock of refuge,
a strong fortress to save me.
Since you are my rock and my fortress,
for the sake of your name lead and guide me.
Keep me free from the trap that is set for me,
for you are my refuge.
Into your hands I commit my spirit;
deliver me, LORD, my faithful God.
I hate those who cling to worthless idols;
as for me, I trust in the LORD.
I will be glad and rejoice in your love,
for you saw my affliction
and knew the anguish of my soul.
You have not given me into the hands of the enemy
but have set my feet in a spacious place.
Be merciful to me, LORD, for I am in distress;
my eyes grow weak with sorrow,
my soul and body with grief.
My life is consumed by anguish
and my years by groaning;
my strength fails because of my affliction,^[b]
and my bones grow weak.
Because of all my enemies,
I am the utter contempt of my neighbors
and an object of dread to my closest friends—
those who see me on the street flee from me.
I am forgotten as though I were dead;
I have become like broken pottery.
For I hear many whispering,
“Terror on every side!”
They conspire against me
and plot to take my life.
But I trust in you, LORD;
I say, “You are my God.”
My times are in your hands;
deliver me from the hands of my enemies,
from those who pursue me.
Let your face shine on your servant;
save me in your unfailing love.
Let me not be put to shame, LORD,
for I have cried out to you;
but let the wicked be put to shame
and be silent in the realm of the dead.
Let their lying lips be silenced,
for with pride and contempt
they speak arrogantly against the righteous.
How abundant are the good things
that you have stored up for those who fear you,
that you bestow in the sight of all,
on those who take refuge in you.
In the shelter of your presence you hide them
from all human intrigues;
you keep them safe in your dwelling
from accusing tongues.
Praise be to the LORD,
for he showed me the wonders of his love
when I was in a city under siege.
In my alarm I said,
“I am cut off from your sight!”
Yet you heard my cry for mercy
when I called to you for help.
Love the LORD, all his faithful people!
The LORD preserves those who are true to him,
but the proud he pays back in full.
Be strong and take heart,
all you who hope in the LORD.

ՄԵՐԻ ՀԵՏ ԱՊՐՈՂ ՅԻՍՈՒՆ

Սուրբ Հաղորդութիւնը այն առիթն է, երբ Յիսուս ամբողջապէս մեզի հետ կ'ըլլայ, որովհետեւ, հաղորդութեան ընթացքին, ան միայն մեր ներսիդին ապրող Քրիստոսը չէ, այլեւ մեզի հետ ապրող Քրիստոսը:

Ինչպէս Եմմաուսի մէջ, հաց կտրելու ընթացքին, երկու աշակերտները ճանչնալով Քրիստոսը, նոր յարաբերութեամբ մը անոր հետ դարձան մէկ եւ քաջութիւնը ունեցան վերադառնալու իրենց ընկերներուն մօտ, նոյնպէս եւ մենք, որ հաղորդութեամբ Յիսուսի Մարմինն ու Արիւնը ստացանք, պիտի յաջողինք նոր միութիւն մը հաստատել մեր շրջապատին հետ:

Արդարեւ, երբ գիտակցինք, որ Քրիստոս կ'ապրի մեր մէջ, պիտի անդրադառնանք նաեւ, որ ան կ'ապրի մեր նմաններուն մէջ: Այդպիսով, ան մեզ կը դարձնէ հաւաքական մարմնի մը անդամներ, որոնք միասնաբար կը վկայեն, թէ աշխարհէն ներս, Քրիստոս ներկայ է:

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅԸ
ՀԵՆՐԻ Ճ. Մ. ՆՈՒԸՆ**
Հայացուց՝ Մակար Արք. Ազգարեան





ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ՃԱՇՈՒ ԺԱՄ, ԿԱՄ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

Մինչևի հոս, ինչպես ըսինք, պատրաստությունն էր: Այստեղ Պատարագը կը սկսի՝ պատարագիչին կողմէ Ամենասուրբ Երրորդության ուղղուած փառաբանութեամբ. «Օրինեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից. ամէն»:

Այս մասը ճաշու ժամ կը կոչուի, որովհետեւ իրականին մէջ առանձին ժամերգութիւն մըն է, որ կը կատարուի կէսօրուան մօտ, եւ որուն հիմնական բաժինը աստուածաշնչական ընթերցումներն են:

Նոյն այս մասը կը կոչուի նաեւ «Երախայից Պատարագ»: Երախայ կը կոչուի նորահաստները, որոնք տակաին մկրտուած չէին, եւ մինչև իրենց մկրտուիլը պէտք էր քրիստոնէական հաստքը ուսանէին, հաստքի հիմնական կէտերը սորվէին եւ ապա միայն մկրտուելով՝ համարուէին Եկեղեցւոյ ճշմարիտ անդամ, եւ կարենային հաղորդուիլ Քրիստոսի Մարմին եւ Արեան:

Պատարագին այս բաժինը քրիստոնէական այդ դաստիարակութիւնը փոխանցելու կը ծառայէր, հետեւաբար՝ առաջին հերթին սահմանուած էր «Երեխաներուն», թէպէտ ո՛ր միայն անոնց, այլ նաեւ հաստացեալներուն ինչպէս քիչ ետք պիտի ըսենք:

ՃԱՇՈՒ ԺԱՄԱՄՈՒՑ

Հազիւ ճաշու Պատարագը սկսած, Դպիրները կը ծայնեն օրուան ժամամուտը, որ նոյն օրուան տօնական խորհուրդը կ'ամփոփէ եւ կ'արտայայտէ (օրինակ՝ սովորական Կիրակիներուն՝ «Միածին Որդի եւ Բան Աստուած», որ փրկագործական տնօրինութեանց ամփոփումն է, Ծնունդին՝ «Աստուածածին անհարսնացեալ», Չատիկին՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ գմահ կոխեաց...», Հոգեգալուստին՝ «Աստուած զքեզ խոստովանիմք, զՍուրբ Հոգիդ, եւ երկիր պազանեմք...», Խաչի տօներուն՝ «Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ», եւն.):

ՃԱՇՈՒ ՀԱՐԱԿԱՆ

Քահանային կողմէ կարճ աղօթքէ մը ետք («Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է...»), դպիրները կ'երգեն օրուան յատուկ ճաշու շարականը: Ինչպէս անունը ցոյց կու տայ, այս շարականը ճաշու ժամերգութեան յատուկ է, եւ օրուան խորհուրդը կամ յիշատակը կ'արտացոլացնէ (Յարութեան, Համբարձման, Հոգեգալուստեան, Վարդավաթի, Աստուածածնայ, Խաչի, Ծննդեան, սրբոց, ապաշխարութեան, եւն.):

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Անմիջապէս կը հետեւի «Սուրբ Աստուած» երգը, որ կը կոչուի նաեւ «Երեքսրբեան փառաբանութիւն», որովհետեւ անով երեք անգամ Աստուծոյ անմատչելի սրբութիւնը կը յայտարարենք: Այս երգը յատուկ է նաեւ մեզ շրջապատող միա եկեղեցիներուն: Բայց, մինչ Արեւելքի ուղղափառ եկեղեցիներս զայն կ'երգենք ի դիմաց Քրիստոսի, Քիւսանդական եկեղեցին զայն կ'երգէ ի դէմս Ամենասուրբ Երրորդութեան: Ասիկա անցեալին բաւական վէճերու եւ նոյնիսկ հակառակութեանց պատճառ հանդիսացած է:

Հետաքրքրական է գիտնալ, սակայն, որ մեր եկեղեցիին համար այս երգը Քրիստոսաբանական ճշմարիտ դասնութեան արտայայտութիւն մը նկատուած է, եւ զայն կը գտնենք ոչ միայն Պատարագին մէջ, այլ նաեւ առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութեանց ու կարգ մը եկեղեցական հայրերու կամ ժողովներու դասնական գրութեանց մէջ, ինչ որ շատ յատկանշական է:

Անով կը դասնինք Քրիստոսի Աստուածութիւնը, «հօր եւ անմահ», եւ միաժամանակ անոր մարդացումը մեզի համար, «որ մարմնացար վասն մեր», եւ խաչի վրայ զոհագործումը մեզի համար, «որ խաչեցար վասն մեր», եւ կը կնքենք իր ողորմութիւնը խնդրելով:

Մինչ ժողովուրդը կը սկսի «Սուրբ Աստուած»ը երգել, պատարագիչը Սեղանին վրայէն սուրբ սպասարկող Սարկաագին, որ զայն ժողովուրդին ի տես բարձրացուցած՝ հանդիսատրապէս կը վերաբերէ զայն, այսինքն՝ խորանին ետեւէն թափօր դառնալով զայն Սեղանին աջակողմէն կը բերէ ձախ կողմը, եւ բեմին յառաջակողմը գալով համբուրել կու տայ դասին մէջ կանգնող հոգեւորականներէն երիցագոյնին (կամ օրուան ընթերցողին, որ քիչ ետք մարգարէական եւ առաքելական գիրքերէն պիտի կարդայ):

Այս հանդիսատրութիւնը աննպատակ եւ առանց իմաստի չէ: Աւետարանը Աստուծոյ Խօսքն է, եւ այս պահուն անկա ժողովուրդին կը ներկայանայ Աստուծոյ մատով քարեղէն տախտակներուն վրայ գրուած Տասնաբանեայ Պատուիրաններուն պէս, որ Մովսէս մարգարէն Սինայ լեռան վրայ Աստուծմէ առնելով բերաւ ժողովուրդին:

(Շարունակելի 4)
«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՅԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Եկե՛ք հասկնանք պատկեր գործածելուն ճիշդ իմաստը:

Հայ եկեղեցին, համեմատաբար միա եկեղեցիներուն, չափաւոր ու զուսպ եղած է իր եկեղեցիներէն ներս պատկերներու գործածութեան մէջ: Հակառակ անոր, որ հին ժամանակներէն սկսեալ մեր եկեղեցիներէն ներս զարգացուած են պատկերներու, որմանակարներու, բարձրաքանակներու, իսկ ձեռագիրներու մէջ՝ մանրանկարչութեան արուեստները, սակայն միշտ ալ՝ չափաւոր կերպով: Հայ ժողովուրդը առաւելապէս ստեղծած է հաստքի ինքնուրոյն արտայայտչածէ մը, որ է՝ Խաչքարը:

Անցեալին, երբ մարդիկ գրել-կարդալ չէին գիտեր, պատկերները դաստիարակիչ դեր կը խաղային. պատկերներու ճամբով Աստուածաշնչական դասեր սորվեցնելով մարդոց: Պատկերներու միջոցով ներկայացուած են Յիսուսի երկրային կեանքի դրուագները, անհասանելիին ու անտեսանելիին, ինչպէս նաեւ՝ սուրբերու կեանքի զանազան դէպքերը, որպէսզի օգնեն հաստացեալին ըմբռնելու աստուածայինը եւ տեսանելի կերպով հետեւելու Քրիստոսի կեանքին ու սուրբերու վարքին պատմութեան: Եկեղեցիներէն ներս կախուած պատկերները յատուկ աղօթքներով օծուած են՝ ի բժշկութիւն հաստացեալներու ցաւերուն եւ ի մխիթարութիւն բոլորին:

Յստակ է, որ նկարը, այսինքն՝ պատատը, կտար չէ որ յարգանքի ու մեծարանքի առարկայ է, այլ այդ նկարին ետին գտնուող՝ պատկերուած սուրբին կամ մարտիրոսին անձը, որ իր վարքով ու բարքով անուշաբոյր խունկ եղած է Աստուծոյ մօտ: Նոյնպէս՝ Խաչին նկարին կամ քանդակին մէջէն ո՛չ թէ առարկան է որ կը պաշտենք, այլ՝ նոյնիքն Խաչեալը, որ Իր սուրբ ու մաքրարար արիւնը թափեց մեր փրկութեան համար: Ինչպէս որ, օրինակ, երբ մէկը իր զաւակներուն, իր մօրը կամ իր մէկ սիրելիին նկարը ձեռքը առնէ ու համբուրէ, ո՛չ թէ նկարը կամ թուղթի կտորն է որ համբուրած կ'ըլլայ, այլ՝ անոր ետին կանգնող իր սիրելին:

Ահա թէ ինչն պէտք է առանց խղճահարութեան կանգնիլ Տէրունի կամ սրբոց պատկերներուն դիմաց եւ աղօթք բարձրացնել Աստուծոյ:

ԱՍՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԻՄՔ ՈՒՆԻ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ՄԵԾԱՐԵԼԸ:

Քրիստոնէայ Ընդհանրական եկեղեցին առաքելական դարերէն սկսեալ մեծարած է սուրբերու մատուցները: Ս. Ստեփանոս նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին նահատակութենէն ետք, հակառակ անոր որ Երուսաղէմի եկեղեցւոյ դէմ մեծ հալածանք յարուցուած էր, սակայն »Քանի մը բարեպաշտներ Ստեփանոսի մարմինը տարին թաղեցին, մեծ կոծ ընելով անոր վրայ« (Գործք 8.2):

Սուրբերու մատուցները միշտ ալ մեծարուած են Եկեղեցւոյ կեանքին մէջ, հաստացեալներուն կողմէ, եւ հետագային անոնց մահուան վայրերուն ու անոնց մատուցներուն վրայ վկայարաններ ու եկեղեցիներ շինուած են:

Հին Կտակարանին մէջ կը կարդանք, թէ երբ Եղիսէ մարգարէ մեռաւ ու զինք թաղեցին, յաջորդ տարին թշնամիներու գունդերը Իսրայէլի վրայ ներխուժեցին: Երբ հրեաները մարդ մը կը թաղէին, ահա թշնամիներու գունդ մը տեսան, ուստի վախցած՝ մեռած մարդը Եղիսէի գերեզմանը նետեցին: Երբ այդ մարդը Եղիսէի ոսկորներուն դպաւ՝ վերապրեցաւ, եւ իր ոտքերուն վրայ կանգնեցաւ (Դ. Թագաւորաց 13.20-21):

Իսկ Նոր Կտակարանին մէջ կը կարդանք, որ նոյնիսկ իրենց ողջութեան ժամանակ առաքելներուն ու սուրբերուն առարկաները մեծարանքի առարկայ էին, եւ միջոց բազմազան բժշկութեանց: Օրինակ, Գործք Առաքելոցին մէջ կը կարդանք, թէ »Առաքելներուն ձեռքով բազմաթիւ նշաններ ու հրաշքներ կը կատարուէին ժողովուրդին մէջ. այնպէս որ, Պետրոսի անցած ատեն՝ մարդիկ պատգարակներով ու մահիճներով հիանդներ կը բերէին եւ հրապարակներու վրայ կը դնէին, որպէսզի գտնէ անոր շուքը ինչպէս անոնցմէ մէկուն վրայ: Շրջակայ գիտելէն բազմաթիւ մարդիկ Երուսաղէմ կը հաւաքուէին՝ իրենց հետ բերելով հիանդներ եւ պիղծ ոգիներէ տանջուողներ, որոնք բոլորն ալ կը բժշկուէին« (Գործք 5.14-16):

Իսկ ուրիշ տեղ մըն ալ կը կարդանք, թէ՝ »Աստուած Պօղոսի ձեռքով արտասովոր հրաշքներ կը գործէր: Մարդիկ մինչևի իսկ անոր քրտինքոտ թաշկինակն ու գործի հագուստը կը տանէին հիանդներուն եւ անոնք կը բժշկուէին իրենց ցաւերէն, կամ չար ոգիները կ'ելլէին« (Գործք 19.11-12):

Արդ, ոչ թէ սուրբը ինք է որ հրաշք կը գործէ, այլ Աստուած է որ արտասովոր հրաշքներ կը կատարէ իրեն հաստարիմներուն ձեռքով, որպէսզի մարդ անհատը հետեւի սուրբերու կեանքի օրինակին եւ անվախճան կեանքի յոյսը ունենայ իր սրտին մէջ:

ԻՆՉՈ՞Ւ ԿԱՆԻՈՐ Է ՈՒՆՏԱԳԼԱՅՈՒԹԻՒՆԸ:

Ուխտագնացութիւն կը կատարուի բարեպաշտ քրիստոնէաներուն կողմէ, այցելելով զանազան սրբավայրեր, անոնք ըլլան՝ Տէրունակոխ, այսինքն՝ այն վայրերը ուր Յիսուս այցելած է ու կոխած, եւ կամ՝ սուրբերու ապրած կամ նահատակուած վայրերը: Ուխտագնացութիւններ կը կատարուին նաեւ եկեղեցւոյ մը անուանակոչութեան առիթով կամ վանքերը:

Ուխտագնացութեան սովորութիւնը վաղ քրիստոնէութենէն կը սկսի, երբ քրիստոնէաներ սուրբ վայրեր կ'այցելէին՝ երկրպագելու եւ համբուրելու համար Տէրունակոխ վայրերը:

Հին վանքերը կառուցուած կ'ըլլային սուրբերու կամ նահատակներու եւ մարտիրոսներու աճիւններուն վրայ, եւ մարդիկ, անոնց նահատակութեան օրը, այնտեղ կ'երթային՝ աղօթելու եւ Աստուծոյ մօտ սուրբերուն բարեխօսութիւնը խնդրելու:

Ուխտագնացութիւնները հոգեւոր սնունդի ու աճման սքանչելի պահեր են իւրաքանչիւր հաստացեալի համար: Ահա թէ ինչն կարեւոր են կազմակերպուած ուխտագնացութիւնները:

Տէր Տաթև Ա. Քնյ, Միքայէլեան

ՄՐՏԻ ԽՈՐԵՐԸ ԽՕՍԲ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԲԱՆ ԽԲ

Ա.- Տէր Աստուած գութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ՛ զիս երբ գաս Քու թագաւորութեամբդ, Ահաւոր, Հօր, Բարեբար եւ Ամենաստեղծ, Կենդանի, Գովեալ, Ամենակատար, որ մերձ ես բոլոր արարածներուն հառաչանքին: Քեզի կը պաղատիմ՝ Քեզի խաչակից եղողին հետ, որ թէեւ Քեզի համար չբռնուեցաւ, չկապուեցաւ, չկախուեցաւ, չզամուեցաւ, Քու մեծութեանդ անունով չկոխուեցաւ, չանարգուեցաւ, չվկուեցաւ, չքամահրուեցաւ, չխորտակուեցաւ, չմահացուեցաւ, սակայն արդարներուն արքայութեանը -որ բաժինն է յոյսի անձկացողներուն- արժանի երեցաւ, ու Դուն երդումով ծանուցիր իրեն տուած բարիքներուդ անփոփոխութիւնը, ու զինք փառաւորելով՝ յափտեանական փրկութեան յոյսը տուիր լքուածիս:

Բ.- Օրինեալ, օրինեալ, դարձեալ օրինեալ. զիս ալ ընդունէ՛ նոյն հաստքով ու կործանումէ կանգնեցրո՛ր զիս, ո՛վ Բարեբար, բժշկէ՛ զիս ախտաւոր հիանդութենէս, Ողորմած. մահուան եզերքէն կեանքին դարձուր զիս, Կենդանութիւն. Քուկը եմ ես, ապրեցրո՛ր զիս անոր հետ, Ապաինութիւն. հոգով մեռածիս կենդանական շունչ շնորհէ, Յարութիւն, Կեանք եւ Ամմահութիւն. անպակաս բարութիւն եւ Դուն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, ամենազօր աջ, ամենիշխան ձեռ, ամենամօտ աջ, ամենիշխան ձեռք, ամենամօտ մատ: Կամեցիր, Տէր, ու պիտի փրկուիմ, ակնարկէ՛ միայն գթութեամբ, ու պիտի արդարանամ. ըսէ՛ խօսքով, ու անմիջապէս պիտի սրբուիմ. մոռցիր չարիքներուն թիւը, ու իսկոյն պիտի համարձակիմ. առատաձեռնէ՛, ու իմնա քու վրա՛ պիտի պատուաստուիմ. ամէն բանի մէջ փառաւորուած եւ Դուն, յափտեանս: Ամէն:





ՆԻԿԻՅՑ ՏԻԵՂԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«Մարմնացա՛ւ՝ մարդացա՛ւ՝ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին՝ հոգի եւ միտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:

1.- Մարմնացաւ, մարդացաւ:

«Մարմնանալ» կը նշանակէ: 1) Մարմին ըլլալ, մարմինի վերածուիլ, թանձրանալ, նիւթականանալ: 2) Մարմինի ձեւ կամ երեսոյթ ունենալ: 3) Մարդ ըլլալ: Այստեղ այս իմաստներէն 1-ը եւ 3-ը նկատի ունի: Բացատրութիւնը առնուած է Յովհաննէսի Աւետարանէն (Յհ 1.14): Անմարմին Աստուած Բանը, որ մարդոց համար անտեսանելի եւ անշօշափելի է, մարմին եղաւ, որպէսզի կարելի ըլլայ տեսնել ու շօշափել զայն (Ա.Յհ 1.1):

Աղանդաւորներէն ոմանք կ'ըսէին, թէ Բանը մարդկային մարմին առաւ, բայց մարմին մը՝ առանց բանական հոգիի եւ միտքի, որովհետեւ, կ'ըսէին, Բանը ինք հոգիին ու միտքին տեղը առաւ: Ասով, անոնք կը ժխտէին Քրիստոսի մարդկութեան կատարելութիւնը: Հաստատմը «մարմնացաւ» բառին քով կ'աւելցնէ «մարդացաւ», որպէսզի «մարմին»ը կամայականօրէն չբացատրուի, այլ հասկցուի իբրեւ կատարելապէս «մարդ»:

